№ 240 Դեկտեմբերի 24 1881 Դեկտեմբերի 24 № 240

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція «Мшакъ»

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

այտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ „ՄՇԱԿ“

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԼՐԱԳԻՐԸ

ԵԿՈՂ **1882** ԹԻՆ

(ՏԱՍՆ ԵՒ ՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

կը հրատարակվի նոյն դիրքով և նոյն պրոգրամմայով.

ՊՐՈԳՐԱՄԱ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II. Առաջնորդող յօդուածներ, III. Ներքին տեսութիւն, IV. Արտաքին տեսութիւն, V. Խառն լուրեր, VI. Հեռագիրներ, VII. Ֆելիետօն կամ Բանասիրական, VIII. Ցայտարարութիւններ.

ԼՐԱԳՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ, 10 ռուբլ է, կէս տարվան 6 ռ., իւրաքանչիւր ամսին 1 ռուբլ. Հատով համարները 5 կոպէկ.

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետևեալ հասցէով. Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Ղզլարից։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Գերմանիա։ Ֆրանսիա։ Անգլիա։ Նամակ Թիւրքիայից։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ — ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Թիֆլիսի Ս. Գէորգ եկեղեցու կալուածական խնդիրը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՂԶԼԱՐԻՑ

—

Դեկտեմբերի 14-ին

Համարեա ամբողջ Ղզլարի ժողովուրդը հայեր են, որոնք զլխաւորապէս պարապում են այգեգործութեամբ. այս պարապմունքը այնքան զարգացած է այստեղ, որ հազիւ կարելի է գտնել մի փոքր ի շատէ ունևոր մարդ, որ այդի չունենայ. մի խօսքով այգեգործութիւնը այնպիսի մեծ նշանակութիւն ունի Ղզլարի համար, որ առանց նորան ոչ մի օր նա չէ կարող գոյութիւն ունենալ։ Բայց հանգամանքները այնպէս են փոխվել, որ շուտով ժողովուրդը հարկադրված կը լինի թողնել այս պարապմունքը։ Այն երկիրը, որը համարեա առանց աշխատանքի տալիս է ամենայն տեսակ բարութիւն, ինչպէս մի Հնդկաստան, շուտով ամայի պէտք է դառնայ հայերի ձեռքում, եթէ օտարները չը դադարեցնեն և ոչ ոքի չեն թողնում հանգիստ։ Ղզլարը տալիս է տարէնը մինչև 500,000 վեդրո գինի, բացի սպիրտից. ինչ ահագին հարստութիւն, որից մենք հայերս չենք կարողանում օգտվել։ Այս ամբողջ գինին առնում են տեղիս հայ վաճառականները խեղդելով մինչև կոկորդը խեղճ այգեստէրերին և տանում են Նիժնի տօնավաճառ, բայց այստեղ այնքան ինտրիգներ են գործ ածում միմեանց դէմ, որ ըստ հերթին իրանք ևս խեղդվում են Մոսկվայի վաճառականներից. այսպիսի վարմունքից գինու գինը այնքան ցած է ընկել, որ այժմեան մշակի և հացի թանգութիւնը անկարելի է անում այգեգործութիւնը և եթէ դա մինչև այժմ գոյութիւն ունի, այն էլ սպիրտի օգնութեամբ, որը ստացվում է հասարակ տեսակ գինուց և խաղողի ճաճից. բայց լուր կայ, որ այդ սպիրտի ակցիզը ավելանալու է հինգ անգամ, ինչպէս հարաւային կովկասում։ Եթէ այս լուրը կը հաստատվի, այն ժամանակ համարձակ կարելի է նախագուշակել Ղզլարի այգեգործութեան վերջը։ Ցաւում է մարդու սիրտը, տեսնելով որ այդպիսի մի հարուստ երկիր պիտի ամայի դառնայ մեր անհաշտութիւնից։ Ժամանակը չէ արդեօք զարթնել քնից, քանի որ օտարները մեր ձեռքից չեն խլել բոլորը. միանգամ և այժմս ժողոված գործենք. հարստացնենք համ երկիրը, համ մեզ։

Կիլի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Русскій Курьеръ» լրագիրը ասում է։ «Շատ անգամ արդէն քննվեցաւ այն հարցը թէ հարկաւոր է ժողովրդական դպրոցներում մտցնել արուեստների ուսումը։ Այժմ, ինչպէս լսում ենք, այդ հարցը նորից քննվեցաւ ազգային լուսաւորութեան մինիստրութեան ուսումնական մասնաժողովի մէջ։»

—

Հինգշաբթի, դեկտեմբերի 21-ին, Թիֆլիսի հայ դերասանական խումբը ներկայացրեց «Սիրուց խելագար» դրաման, որի մէջ դերեր ունէին օր. Կարագաշեան և տ. Հրաչեայ։ Այդ վերջինը ներկայացման երեկոյ երկու ընծայ ստացաւ։

—

Երեքշաբթի օր, դեկտեմբերի 22-ին, Արծրունու թատրոնում կոնցերտ կար բարեգործական նպատակով, որին մասնակցեց ռուս իգական խօրը, պ. Յէյտլինի առաջնորդութեամբ։ Այդ խօրը որ բաղկացած է 12 կանանցից և 6 տղամարդուց աւելի լաւ է երգում բուն ռուս երգերը, քան թէ եւրոպական եղանակները։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

—

Անգլիական „Standard“ լրագրին հասատատ աղբիւրներից հաղորդում են, որ վերջին ժամանակներում գերմանական թագաժառանգի և իշխան Բիսմարկի մէջ նշանաւոր խորհրդակցութիւններ են եղել։ Գերմանական թագաժառանգի կարծիքով, գերմանական կառավարութեան և պապի մէջ եղած դժուարութիւնների ոչնչացնելը և իշխան Բիսմարկի տնտեսական վերանորոգութիւնների իրագործելը կը նպաստեն Գերմանիայի զարգացմանը և հաստատութեանը։ Բայց այդ նպատակներին հասնելու համար շատ տարիներ են հարկաւոր։ Կայսրը բաժանում է թագաժառանգի և իշխան Բիսմարկի այդ կարծիքները և այդ պատճառով վճռել է այդ նախագիծը կասկել իր ժառանգին։ Բայխստագի բացումից առաջ կայսրի, թագաժառանգի և իշխան Բիսմարկի մէջ համաձայնութիւն կայացաւ այդ հարցի վերաբերութեամբ, որ և յայտնվեցաւ գահական ճառի մէջ։ Այն խօսքերը, որոնք վերաբերում էին նախագիծը ապագային կասկելուն, մտցրած էին գահական ճառի մէջ իշխան Բիսմարկի խորհրդով և թագաժառանգի հաւանութեամբ։ Իշխան Բիսմարկի և թագաժառանգի մէջ եղած խորհրդակցութիւնների ժամանակ նրանց մէջ համաձայնութիւն է կայացել ներքին և արտաքին բոլոր հարցերի վերաբերութեամբ։

Թիւրքաց դեսպանութիւնը ուղևորվեցաւ Բերլինից Կ. Պոլիս։ Դեսպանութեան գլխաւոր Ալի-Նիզամ փաշա ընդունվեցաւ Վիլհելմ կայսրի եղբայր իշխան Կարլից, իսկ սուլթանի մասնաւոր քարտուղար Բեշիդ-բէյ խորհրդակցութիւն ունեցաւ իշխան Բիսմար-

---

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹԻՖԼԻՍԻ Ս. ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱԼՈՒԱԾԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

«Մշակի» ընթերցողներին բաւական յայտնի է Թիֆլիսի ս. Գէորգ եկեղեցուն (Քամօենց) պատկանող գետնի վէճը պ. Շաբուրովի հետ, որը 12 տարով պայման կապելով հոգ. կառավարութեան հետ, այդ գետնի վրա կառուցել էր շինուածքներ, և իւրաքանչիւր տարի, որպէս վարձ, տալիս էր եկեղեցուն մի քանի հարիւր ռուբլ միայն թէև ինքը պ. Շաբուրովը ստանում էր ամեն տարի մօտ քսան հազար ռուբլ եկամուտ։ Այդ հրէշաւոր պայմանի մասին, թէ որքան անտես էին առնված նրա մէջ եկեղեցու շահերը, արդէն խօսվել է «Մշակի» մէջ։

Պայմանագրի 12 տարի ժամանակամիջոցը լրացած լինելով, բացի դրանից, երկու տարի էլ աւել պ. Շաբուրովը վայելած լինելով եկեղեցապատկան գետնի եկամուտները, վերջապէս եկեղեցու ծխականները խելքի են գալիս, և հոգ. կառավարութեան միջնորդութեամբ, կամենում են պ. Շաբուրովի հետ գործը վերջացնել։ Ընտրվում է մի մասնաժողով, հինգ անձինքներից բաղկացած, գործը քննելու համար։

Մասնաժողովը իր պարապմունքները աւարտած լինելով, կիրակի, 20 դեկտեմբերի, առաջնորդարանի դահլիճում հաւաքված ժողովին ներկայացրեց իր պատրաստած զեկուցումը և մի յատակագիծ, որի վրա որոշված էին եկեղեցապատկան գետնի սահմանները ու քանակութիւնը։

Իր քննութիւնների մէջ մասնաժողովը հասել էր հետևեալ եզրակացութիւններին, թէ պ. Շաբուրովի պայմանագիրը պէտք է այսուհետև համարել զրկված իր օրինական նշանակութենից, իսկ նրա պահանջը, թէ նա իրաւունք ունի կրկին 12 տարով նորոգել պայմանագիրը մի և նոյն բովանդակութեամբ,—այդ պահանջը ևս պէտք է համարել անիրաւացի, որովհետև հակառակ է եկեղեցապատկան կալուածքների վերաբերութեամբ հրատարակված արդէն յայտնի օրէնքի յօդուածներին։

Բայց որպէս զի վէճը պ. Շաբուրովի հետ խաղաղական ճանապարհով վերջանայ, յանձնաժողովը իր զեկուցման մէջ բարոյ է համարում գործը վերջացնել հետևեալ կերպով. 1) որ պ. Շաբուրովը տայ եկեղեցուն նրա գետնի վրա իր ծախքով կառուցած 4 խանութներ, որոնք բերում են 4000 ռուբլ տարեկան եկամուտ և մի ներքնատան (պօդվալի) կէս մասը։ 2) պ. Շաբուրովի կառուցած մնացած շինուածքների տակ գտնված եկեղեցապատկան գետինը, որ 135 քառակուսի սաժէն է, վաճառվի իրան պ. Շաբուրովին, իւրաքանչիւր քառակուսի սաժէնը 100 ռուբլով, և ստացվի նրանից 13,500 ռուբլ յօգուտ եկեղեցու։

Մեզ յայտնի չէ, թէ ինչ հրահանգներով այդ գործը յանձնված է եղել մասնաժողովին, արդեօք նա պիտի բաւականանար միմիայն քննութիւններով, թէ իր քննութեան սահմանից անցնելով, նա պիտի որոշէր և այն եղանակները, որով աւելի նպատակայարմար կը լինէր վերջացնել գործը պ. Շաբուրովի հետ, ի հարկէ, եկեղեցու շահերը միշտ նախադաս բռնելով։ Բայց, մեր կարծիքով, մասնաժողովի առաջարկութեան մէջ եկեղեցու շահերը ոչ միայն նախադաս չեն բռնված, այլ բոլորովին անտես են առնված։ Ահա ինչ պատճառով. մասնաժողովը առաջարկում է եկեղեցապատկան գետինը վաճառել պ. Շաբուրովին, իւրաքանչիւր քառակուսի սաժէնը գնահատելով 100 ռուբլով, և ստանալ նրանից 13,500 ռուբլ։ Բայց ինչ փաստերի վրա է հիմնում իր արած գնահատութիւնը,—այդ մասին ոչինչ տեղեկութիւն չը կայ։ Եթէ պէտք էր եկեղեցապատկան գետինը անպատճառ վաճառել պ. Շաբուրովին, մասնաժողովը պարտաւոր էր հրաւիրել հմուտ գնահատողներ և նրանց կարծիքի վրա հիմնել իր վճիռը։ Կամ պէտք էր գոնէ ի նկատի առնել, թէ եկեղեցապատկան գետնին սահմանակից, կամ նոյն փողոցի վրա գտնվող այլ անձանց պատկանող գետինները որքան արժէք ունեն և նրանց համեմատ գնահատել նաև եկեղեցապատկան գետինը։ Ամեն երեխայ գիտէ, որ Թիֆլիսի ամենագլխաւոր փողոցի վրա, որտեղ գտնվում է և ս. Գէորգ եկեղեցու գետինը, հողերի մի քառակուսի սաժէնը արժէ ոչ թէ 100 ռուբլ (որպէս գնահատել է մասնաժողովը) այլ երկու, երեք հարիւրից մինչև հինգ հարիւր ռուբլ, կամ աւելի։ Ուրեմն պ. Շաբուրովը փոխանակ 13,500 ռուբլու, գոնէ պէտք է մի 100,000 ռուբլ տայ, որ յիշեալ գետնին տէր լինի։ 20 դեկտեմբերի ժողովի մէջ ներկայ գտնվող հանդիսականներից միայն մէկը՝ բժիշկ պ. Բարայեանցը նկատողութիւն արեց եկեղեցական գետնի չափից դուրս էժան գնահատվելու մասին։ Բայց մասնաժողովի անդամները, որոնք աւելի պ. Շաբուրովի փաստաբանի պաշտօն էին կատարում, քան եկեղեցու շահերը պաշտպանողի, նրան պատասխանեցին, թէ գետինը Քամոյենց ժառանգների հետ վիճելի է, և որովհետև պ. Շաբուրովը իր վրա է առնում, ինչ վախճան որ ունենայ գործի վճիռը տուղում, այդ պատճառով և մասնաժողովը նրան զիջումներ արեց գնահատութեան մէջ։

Մենք չենք կարծում, որ պ. Շաբուրովը այն միամիտ պտուղներից լինէր, որ վիճելի գետնին ոչ թէ 13,500 ռուբլ, այլ 13 կոպէկ վճարէր։ Մեզ յայտնի է, որ Թիֆլիսի նահանգական դատարանը վաղուց արդէն այդ գործը վճռել է յօգուտ եկեղեցու, և որոշել է, թէ ինչ չափով, ինչ սահմանով, որքան գետին պատկանում է եկեղեցուն։

Պ. Շաբուրովի հետ գործը մի այլ եղանակով վերջացնելու վրա մասնաժողովը կամ ուշադրութիւն չէ դարձրել, կամ չէ կամեցել ուշադրութիւն դարձնել։—Այդ այն եղանակն է, որ փոխանակ եկեղեցապատկան գետինը պ. Շաբուրովին վաճառելու, ինքը եկեղեցին գնէր նրա կառուցած շէնքերը։ Ճշմարիտն ասած, մենք չենք հասկանում, թէ ինչն է ստիպում մի այսպիսի հարուստ, արդիւնաբեր եկեղեցապատկան կալուածք վաճառել պ. Շաբուրովին, այն ևս ամենաչնչին գնով։ Ի՞նչու չը գնել նրա կառուցած շէնքերը և

կի հետ և իր խօսակցութեան հետևանքները անձամբ յայտնեց Թիւրքաց դեսպանին Բերլինի մէջ։ Շատերը կարծում են, որ սուլթանի մասնաւոր քարտուղարը իր տիրոջից առանձին յանձնարարութիւն ունէր, որ և հաղորդեց իշխան Բիսմարկին։ Կարծում են, որ Բադովից գերմանական դեսպան կը նշանակուի Կ. Պոլսի մէջ։

Նորերումս ֆրանսիական լրագիրները հաղորդեցին, որ Գամբետտայի բարեկամուհի և „Nouvelle Revue“ հրատարակիչ տիկին Էդմոն-Ադամ ուղևորվում է Ռուսաստան և որ նրա ճանապարհորդութիւնը քաղաքական նպատակներ ունի։ Իշխան Բիսմարկի „Nord Deut. Ztg.“ մի նկատողութիւն է տպել տիկին Էդմոն-Ադամի կապերի մասին ռուս բարձրաստիճան անձանց հետ և նրա ճանապարհորդութեան քաղաքական նպատակների մասին։ Լրագրի կարծիքով տիկինը լաւ ընդունելութիւն կը գտնի Ս. Պետերբուրգի մէջ։ Քաղաքական բոլոր գործիչները, թէ ֆրանսիացիք և թէ օտարները, այցելում էին նրա սալօնը Փարիզի մէջ, այդ պատճառով նա նշանաւոր կապեր ունի և Ռուսաստանի մէջ։ Լրագիրը մատնացոյց է լինում, որ տիկնոջ թերթի մէջ միշտ նկատվել է ատելութիւն և անհաշտ թշնամութիւն դէպի Գերմանիա։ Այդ թերթի մէջ տպվել են ռուս հեղինակների այնպիսի յօդուածներ, որոնք չէին կարող հրատարակվել Ռուսաստանի մէջ։ Իշխան Բիսմարկի լրագիրը բաւականանում է այդ փաստերի հաղորդութեամբ առանց եզրակացութիւններ անելու։ Ցաւալի է, նկատում են լրագիրները, որ այդ յօդուածի մէջ յիշված է տիկին Լամբերի մասնաւոր կեանքը և նա մեղադրվում է քաղաքական ամուսնութեան համար, որի հետ ոչ ոք գործ չունի։

ՖՐԱՆՍԻԱ

Հաստատ աղբիւրներից հաղորդում են, որ ֆրանսիական արտաքին գործերի մինիստրութիւնը իր առաջարկութեանը կոմս Շօրդրիին գեներալ Շանզիի տեղ դեսպան նշանակելու մասին բարեյաջող պատասխան ստացաւ ռուսաց կառավարութենից։ Ֆրանսիական կառավարութիւնը վճռել է դեսպաններ նշանակել Լօնդօնի մէջ Տիսսօին, Կ. Պոլսի մէջ՝ մարկիզ Նոյելին, Բերլինի մէջ՝ Կուրսելին։

Գամբետտայի կողմնակից լրագիրների դատողութիւնները, որոնք կարծիք են յայտնում, թէ Գամբետտա անսահման իշխանութիւն ունի վարչութեան վրա, և մերժում են պարլամենտի իրաւունքը հսկողութիւն ունենալ նրա նշանակած վարչական անձանց վրա, երկիւղ են պատճառում պարլամենտական շրջաններին։ Օրինակի համար գեներալ դը-Լօնգ պատերազմական մինիստրութեան մէջ արտիլերիական բաժնի կառավարչի պաշտօն է ստացել։ Այդ գեներալը մայիսի 16-ի մինիստրութեան ժամանակ Ռուանի մէջ զինուորական շրջանի գլխաւորի պաշտօն էր վարում։ Պատերազմական մինիստր Բոշբուէ նրան հրամայեց գալ Փարիզ և իր զօրքերով գրաւել Մօնմարտր և Պուասօնիէր բուլվարները։ Ներկայումս բացի պատերազմական մինիստր Կամբենէօնից, որ հանրապետական է համարվում, թէպէտ մի և նոյն ժամանակ Գամբետտայի կոյր գործիք է, պատերազմական մինիստրութեան բոլոր նշանաւոր պաշտօնները ստացել են հանրապետութեան յայտնի թշնամիները։ Հանրապետական բարձրաստիճան օֆիցերներից չորսը նորերումս արձակված են „շատախօսութեան“ պատճառով։ Շատերը հարցնում են. արդեօք ի՞նչ նպատակ ունի Գամբետտա լցնել պատերազմական մինիստրութիւնը գեներալներով և օֆիցերներով այն շրջաններից, որոնք յայտնի են իբրև հանրապետութեան ամենաոխերիմ թշնամիներ։ Մինչև անգամ „Télégraphe“ լրագիրը, որ մինիստրութեան կողմնակից է, այդ առիթով երկիւղ է յայտնում և կառավարութենից բացատրութիւններ է պահանջում։ Գամբետտային շատ լաւ յայտնի է, թէ այն յետադիմականները, որոնց նա բարձր պաշտօններ է տալիս հանրապետութեան մէջ, ոչ թէ միայն չեն հաշտվում հանրապետութեան հետ, այլ ընդհակառակը նրան աւելի էլ թշնամաբար են վերաբերվում։

Սենատի անդամներին ընտրողների ձախ բաժինը մտադիր է ընտրել „Rappel“ լրագրի խմբագիր Վակերիին և մայոր Լաբօրդերին, որ մի ժամանակ բողոքեց մայիսի 16-ի մինիստրութեան դէմ, երբ նա կամենում էր պետական յեղափոխութիւն գործել։ Այդպիսով նրանք կամենում են բողոքել Գամբետտայի դէմ գեներալ Միրիբելին գլխաւոր շտաբի հրամանատար նշանակելու պատճառով։

Զը նայելով երդվեալ դատաւորների վըճռին Բոշֆորի գործի վերաբերութեամբ, Ռուստան կը վերադառնայ Տունիս և կը շարունակի վարել մինիստր-տեղապահի պաշտօնը։ „Temps“ լրագրին հեռագրում են, որ Բոշֆորի դատաստանական գործից յետոյ Տունիսի մէջ աւելի մեծ չափերով են կատարվում ցոյցեր Ֆրանսիայի հովանաւորութեան դէմ Տունիսի վրա։ Ֆրանսիայի թշնամիները կրկնակի համարձակութեամբ նորոգեցին իրանց ինտրիգները։ Բոշֆորին արդարացնելուց յետոյ անմիջապէս նրանք ուղևորվեցին Բարդօ և յայտնեցին „ուրախալի լուր“, թէ Ռուստան այլ ևս չի վերադառնայ Տունիս։ Ֆրանսիայի թշնամիները Տունիսի մէջ ոչ թէ միայն իտալացիներն են, այլ և թիւրքերը, որոնք նշանաւոր գործ են կատարում։

„Journal des Débats“ լրագրի յայտնի խմբագիր և սենատոր Ջօն Լեմուան դիմում է Գամբետտայի հեռատեսութեանը այն մտադրութիւնների առիթով, որ վերաբերում են Գամբետտային սենատի իրաւունքները սահմանափակելու մասին։ Լեմուան յիշեցնում է մինիստր-նախագահին Կահօրի մէջ արտասանած խօսքերը, երբ նա դեռ պատգամաւորների ժողովի նախագահ էր։ Այն ժամանակ Գամբետտա կարծիք յայտնեց, որ հակառակ էր սահմանադրական արագ վերանորոգութիւններին և հանրապետութեան ապագայի համար մեծ նշանակութիւն տուեց սենատի իրաւունքներին։ Գամբետտայի այդ կարծիքը այժմ փոխվել է, որովհետև սենատը մերժեց նրա ընտրողական օրինագիծը ցուցակներով։ „Journal des Débats“ ակնարկում է, որ լիազօր իրաւունքներ ունեցող սենատը կարող է ժամանակով փրկարար նեցուկ լինել ոչ թէ միայն հանրապետութեան համար, այլ և այժմեան կառավարութեան համար։ Այդպիսով Գամբետտային և նրա կուսակցութեանը խոստացվում է սենատի պաշտպանութիւնը պատգամաւորների ժողովի հանրապետական մեծամասնութեան դէմ։ Առ-ժամանակ մինիստրները ծածկում են իրանց ակնարկութիւն։ Յայտարարութեան մէջ յիշվում է մի բոլորովին նոր հնարած բան, իբր թէ եկեղեցական գետինը կամենում են կապալով տալ և այդ հարցը քննել է մասնաժողովը, և պիտի ներկայացնէ իր զեկուցումը։ Բայց կապալով տալու խնդիր ոչ յարուցվել է և ոչ յանձնվել մասնաժողովին։ Կարծես, ամբողջ յայտարարութիւնը միայն այն մտքով խմբագրված էր, որ ոչ ոք ոչինչ չը հասկանար.... Եւ մենք այդ չը հասկանալուն ենք վերաբերում, որ 20 դեկտեմբերի ժողովում ս. Գէորգ եկեղեցու ծխականներից եկել էին մի երկու, երեք հոգի միայն, քանի որ, պէտք էր ծխականների եթէ ոչ բոլորը, գոնէ կէսը ժողովում ներկայ լինէր։

20 դեկտեմբերի ժողովը մեր ամենախայտառակ ժողովներից մէկն էր, ուր ժողովրդի անունով են գործում, բայց իսկապէս ժողովուրդ չէ լինում, լինում են մի քանի ընտրեալներ, որ իրանց ուզածին պէս գործը շուռ են տալիս։

Մթթէ կոնսիստորիան չէր կարող իր կողմից աւելի պարզ, աւելի որոշ մի յայտարարութիւն տպել տալ, գոնէ մէկ շաբաթ առաջ, և կրկնել լրագրի մի քանի համարներում, որ ժողովուրդը հասկանար. թէ ինչ գործի համար են հրաւիրում իրան։ Մթթէ կոնսիստորիան չէր կարող հրամայել ս. Գէորգ եկեղեցու քահանաներին, որ ժամարարներին ծանուցում անէին, թէ այս ինչ օրը պէտք է ժողով լինի պ. Շաբուրովի գործի մասին, որովհետև դրանց աւելի էր հետաքրքրում իրանց եկեղեցու օգուտը և նրա չահերի պաշտպանութիւնը։

Այս բոլորը այսպէս լինելուց յետոյ, մեր կարծիքով, կոնսիստորիայի ներկայացուցիչ Մամբրէ վարդապետը, որ ներկայ էր ժողովին, թոյլ չը պիտի տար ժողովի կայանալը, երբ որ տեսաւ, ս. Գէորգ եկեղեցու ծխականներից մի երկու, երեք հոգի էին եկել, իսկ միւս եկեղեցիների ժողովրդից նոյնպէս ներկայ էին նոյն թիւով մարդիկ։ Բայց չը գիտենք ինչն էր փականք դրել հայր սուրբի լեզուի վրա։

Վերջապէս, մասնաժողովը իր պատրաստած զեկուցումը կարդաց. ժողովուրդը (այսինքն այդ երկու, երեք հոգին) լսեց։ Հանդիսականների (այսինքն այդ երկու, երեք հոգու) հաւանութեամբ կազմվեցաւ պրոտոկոլ այս բովանդակութեամբ. մասնաժողովի առաջարկութիւնը, պ. Շաբուրովի հետ գործը խաղաղութեամբ վերջացնելու համար, ընդունել իրաւացի և եկեղեցու չահերին նպաստաւոր։ Խնդրել վեհ. Կաթողիկոսից, որ բարեհաճի մասնաժողովի առաջարկութեան համեմատ օրինական պարտուպատշաճ ռնօրինութիւնները գործ դնել և վէճին վախճան տալ։

Վեհափառ Կաթողիկոսի ուշադրութիւնը հրաւիրելով գործի մեծ նշանակութեան վրա, մենք յուսով ենք, որ Նա թոյլ չի տայ, որ ս. Գէորգ եկեղեցու հարուստ կալուածքները մի քանի անձանց անհեռատեսութեան զոհ լինեն, և պ. Շաբուրովը առիթ ունենայ կրկին խաղալ նոյն խաղը, ինչ որ կատարեց 12 տարի առաջ, երբ առաջին անգամ պայման կապեց հոգ. կառավարութեան հետ։

***

կի հետ և իր խօսակցութեան հետևանքները անձամբ յայտնեց Թիւրքաց դեսպանին Բերլինի մէջ։ Շատերը կարծում են, որ սուլթանի մասնաւոր քարտուղարը իր տիրոջից առանձին յանձնարարութիւն ունէր, որ և հաղորդեց իշխան Բիսմարկին։ Կարծում են, որ Բադովից գերմանական դեսպան կը նշանակուի Կ. Պոլսի մէջ։

Նորերումս ֆրանսիական լրագիրները հաղորդեցին, որ Գամբետտայի բարեկամուհի և „Nouvelle Revue“ հրատարակիչ տիկին Էդմոն-Ադամ ուղևորվում է Ռուսաստան և որ նրա ճանապարհորդութիւնը քաղաքական նպատակներ ունի։ Իշխան Բիսմարկի „Nord Deut. Ztg.“ մի նկատողութիւն է տպել տիկին Էդմոն-Ադամի կապերի մասին ռուս բարձրաստիճան անձանց հետ և նրա ճանապարհորդութեան քաղաքական նպատակների մասին։ Լրագրի կարծիքով տիկինը լաւ ընդունելութիւն կը գտնի Ս. Պետերբուրգի մէջ։ Քաղաքական բոլոր գործիչները, թէ ֆրանսիացիք և թէ օտարները, այցելում էին նրա սալօնը Փարիզի մէջ, այդ պատճառով նա նշանաւոր կապեր ունի և Ռուսաստանի մէջ։ Լրագիրը մատնացոյց է լինում, որ տիկնոջ թերթի մէջ միշտ նկատվել է ատելութիւն և անհաշտ թշնամութիւն դէպի Գերմանիա։ Այդ թերթի մէջ տպվել են ռուս հեղինակների այնպիսի յօդուածներ, որոնք չէին կարող հրատարակվել Ռուսաստանի մէջ։ Իշխան Բիսմարկի լրագիրը բաւականանում է այդ փաստերի հաղորդութեամբ առանց եզրակացութիւններ անելու։ Ցաւալի է, նկատում են լրագիրները, որ այդ յօդուածի մէջ յիշված է տիկին Լամբերի մասնաւոր կեանքը և նա մեղադրվում է քաղաքական ամուսնութեան համար, որի հետ ոչ ոք գործ չունի։

ԱՆԳԼԻԱ

Նորերումս Իրլանդիայի մէջ կայացաւ կանանց կալուածական միութեան ժողովը։ Զը նայելով, որ կառավարութիւնը մի շրջաբերական էր հրատարակել, որ սպառնում էր կալանաւորել միութեան անդամներին, այնու ամենայնիւ հաւաքվեցան 36 կին և ժողովը կայացաւ տիկին Չենրի Ջօրջի նախագահութեամբ։ Խորհրդակցութիւնների ընթացքին հնչում էին պոլիցիական երկու գործակատարներ, որոնք կալանաւորեցին միութեան ծառային այն ժամանակ, երբ նա պատրաստվում էր յանձնել փոստին նամակների ծրարը։ Օրիորդ Պարնելը, որ ներկայ չէր ժողովին, կարդացրեց, որ նամակները և դրամական ծրարները ուղարկվեն Լօնդօնի ուսումնարանական մասնաժողովի անդամ օրիորդ Կէյլերին, եթէ կանանց միութեան կատարող մասնաժողովի անդամները կալանաւորվեն։ Միութիւնը մի գաղտնի մասնաժողով ընտրեց, որ պարտաւոր է պաշտպանել նրա շահերը, եթէ անդամները բանտարկվեն։ Մի և նոյն ժամանակ Դուբլինի մէջ կալուածատերերի ժողով կայացաւ, որին 250 մարդիկ էին մասնակցում։ Ժողովը մի քանի վճիռներ կայացրեց, որոնք բողոքում են կալուածական օրէնքի գործադրութեան ձևի դէմ և պահանջում են, որ կալուածատերերը վարձատրվեն այդ օրէնքի պատճառով կրած վնասների համար։ Այնու ամենայնիւ կալուածական դատարանները շարունակում են կալուածական տուրքերի պակասեցնելը։ Առաջ նրանք պակասեցնում էին 25—30%, իսկ այժմ 33%։ Մի քանի տեղ կալուածական տուրքը կիսով չափ պակասեցրած է։ Կալուածատերերը աշխատում են դատարաններից դուրս հարմատական լինելը։ Լուսաւորութեան մինիստր յայտնի ատէիստ Պոլ-Բեր կաթոլիկ թեմերին մի շրջաբերական ուղարկեց, որով նա հրամայում է եկեղեցիների մէջ կատարել յայտնի աղօթքները հանրապետութեան համար։ Անաստուածութեան փոխարէն կառավարութիւնը ցանկութիւն է յայտնում ձեռք բերել հոգևորականութեան բարեկամութիւնը և պաշտպանութիւնը։

մաձայնութիւն կայացնել ֆերմերների հետ, բայց վերջինները արհամարհանքով մերժում են այդպիսի առաջարկութիւնները:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Վան, 13 դեկտեմբեր 1881

«Մեղու»-ի 226, 227 և 230 համարների մէջ մի երկար թղթակցութիւն կարդացի Վանէն գրուած «Մեխակ» ստորագրութիւնով: Պ. Նամակագիրն որ կաշխատէր իւր շահի աղբիւր անել վարժապետանոցն և չը կրցաւ նպատակին հասնել, կարծեր է վրէժ լուծել վատահամբաւելով Միացեալ ընկ. Ցնօրէն ժողովը և զիս Ռուսահայաստանի մէջ: Գրողին ոգին բաւական յայտնի կերևի այդ նամակի մէջ. ուստի ես չը պիտի աշխատիմ մի առ մի հերքել այստեղ նորա ամէն վատ զրպարտութիւններ, անամօթ ստախօսութիւններ և իւր սիրելի Գարեգին վ. Սրուանձտեանցի նկատմամբ գրած անտեղի գովեստներն և չողոքորթութիւններն: Աբբաան Ներսէս պատրիարքն այդ գործեր լաւ քննած և արժան համարած է Գարեգինն հեռացունել Վանէն և զմեզ վերադարձուցանել Վան իւր յանձնարարական նամակներով: «Մեխակի» գրածին համեմատ տեղական կառավարութիւն զիս բանտերի և կապանքների մէջ պիտի փտեցունէ եղեր թէ Գարեգին վարդապետ այստեղ չը լինէր և չաղատէր զիս: Արդ, չաբաթէն աւելի է որ ես եկած եմ Վան և Գարեգին վարդապետ այժմ այստեղ չէ, էր թիւրք կառավարութիւնն չէ բանտարկեր զիս և, ընդհակառակ, պատրիարք սրբազանի յանձնարարականին համեմատ սիրալիր պատիւով ընդունեց և մեր բանալիք կենտրոնական վարժարանին պաշտպանութիւն և աջակցութիւն խոստացաւ: Հետզհետէ այնպիսի եղելութիւններ կը յայտնուին որ մարդ պէտք է բաւական անամօթ երես ունենայ որպէս զի կարենայ պաշտպանել Գարեգին Սրուանձտեանցի նման մի եկեղեցական....

«Միացեալ ընկ.» Վասպուրականի տեսչութիւնն վարած ժամանակ, հաշիւներին մէջ խարդախութիւններ արած եմ եղեր, տարեկան 50 օսմ. ոսկի (գրեթէ 450 րուբլ) միայն հեռագրի և փոստի համար, ամիսն 500 ղրուշ (45 րուբլ) մի ձիի մտունդին համար և այլն և այլն կը ծախսեմ եղեր: Մարդ պէտք է որ «Մեխակի» չափ լիրբ և բոլորովին անամօթ լինի որ յանդգնի այդ տեսակ պոչատր սուտեր դնել հրապարակի վրայ և աշխատել որ Ռուսահայաստանցի ընթերցողներն կը լնեն: Իմ հաշիւներ կեցած են պատուարժան Ցնօրէն ժողովին մօտ ում ամէն ժամանակ յղած եմ կանոնաւորապէս. բայց պ. Մեխակ երբէք տեսած չէ իմ այդ հաշուէտետրներ. ուստի, ամօթ չէ՞ որ կելնէ խելքին փչածն կը գրէ, զուցէ մտածելով որ Ռուսահայաստան հեռի է Վանէն և Կ. Պոլիսէն և այնտեղի ընթերցողներին համար դժուար լինելով անձամբ քննել ամէն բան, կարող է դայթակղեցունել զնոսա: Բայց «Մեխակ», Ցփղիսի վերաբերեալ մի հաշիւ ալ կը ներկայացունէ և ռուսահայաստանցիներ կարող են անձամբ քննել դէթ այդ մաս և նմա համեմատ վճիռ տալ միւս գրածներին համար ալ: Ես անցած տարիի վերջեր Միացեալ ընկ. գործերով գնացի Կ. Պոլիս Ցփղիսի ճանապարհով: Պ. Մեխակ որ ամէն տեսակ վատութիւնների կը զիջանի, ուրիշ գոյներով կը ներկայացունէ իմ այդ ճանապարհորդութիւն. իբր թէ ես բաղդախնդրութիւնով ստայօդ լուրեր տարածեր եմ և օգուտ քաղելով բարերարների և ազգասէրների բարեսրտութենէն, 40 օսմ. ոսկի ստացեր եմ եղեր իբր ճանապարհի ծախք որ Ցփղիսէն երթամ Կ. Պոլիս (տեսնել Մեղուի 230 համարն): Կը թողում հարցնել թէ ես բաղդախնդրական ինչ ստայօդ լուրեր տարածեր եմ եղեր, ո՞ր լրագրի մէջ և ո՞ր համարին մէջ. թող ցոյց տան ստորագրութիւնս: Միայն թէ կառաջարկեմ բոլոր տփղիսցիներին և ռուսահայաստանցիներին թէ ո՞վ է տուեր ինձ 40 ոսկի (գրեթէ 360 րուբլ) ճանապարհածախք Ցըփղիսէն Կ. Պոլիս. թող ելնէ հրատարակէ լրագրի մէջ և 360 րուբլին վրայ 5—10 կոպէկ ալ յաւելով չնորհ անէ նոյն լրագրէն մի օրինակ յղել Վան իմ անունով: Բայց թէ մի այդպիսի անձ չը կայ այդտեղ, յայտնի է ամէն մարդ կարող է ինքնին մտածել թէ Մեխակ ինչպիսի վատ ոգիով թաթիսած է իւր գրիչ ամենասուտ կեղտոտութիւնների մէջ և աշխատած է զրպարտել զիս թէ թիւրք կառավարութիւնն (որ բարեբաղդաբար այնչափ զիւրահաւան չէ որ Մեխակներէ խաբուի) և թէ Մեղուի ընթերցողներին առջև:

Թէ ինչ կարժէ պ. Մեխակ իբր մարդ և իբր վանեցի, թէ նա ո՞ր ասպիճան ապերախտ և հայհոյիչ մի անձ է, յայտնի կերևի իւր նամակի մէջ: Նա չէ ամաչեր հրապարակի վրայ «միակ ընդունարան ապականութեանց» անուանել «Մշակն (տեսնել Մեղուի 227 համար), այն Մշակ որ երբ Մեխակի հայրենակիցներ սովէն կը մեռնէին Վանի մէջ, նոցա համար կարծեմ 40 հազար րուբլէն աւելի հաւաքած և իւրեանց կեանք ազատած է. այն Մշակ որ երբ Վանի մէջ սոսկալի հրդեհ պատահեցաւ, առաջինն եղաւ վնասուողներին համար հանգանակութիւն անող և հազարաւոր րուբլիներ յղեց. այն Մշակ որ Արարատեան և Միացեալ ընկ. միջոցով հազարաւոր րուբլիներ տուած է Վանի կրթական գործի համար: Բայց ինք Մեխակ ինչ օգուտ բերած է արդեօք իւր հայրենիքի....:

Գալով իմ տեսչական պաշտօնի կրթական մասին, պէտք չունիմ Մեխակի տալիք վկայականին: Ցաճկահայաստանի կրթական ամենանշանաւոր ընկերութիւնն կոչած էր զիս այդ պաշտօնի և այդ ընկ. պատ. տնօրէն ժողովն, պաշտօնէ դադարած ժամանակս անգամ, սապէս կը գրէ ինձ իւր վերջին նամակի մէջ. «Բաղդը պարտաւորութիւն մը կը համարիմք մեզ յայտարարել ձեզ թէ միշտ գոհ եղած ենք ձեր պաշտօնավարութենէն ի մասին կրթական վերածնութեան վասպուրականի և թէ ընկերութիւնն երախտագիտութեամբ պիտի յիշէ միշտ ձեր անձնուէր աշխատանք և բազմարդիւն ծառայութիւններ:» Թէ մանկավարժական արհեստն որչափ գրաւած է իմ ուշադրութիւն և թէ ինչ աշխատութիւններով ուսումնասիրած եմ զայն, պարտաւոր չեմ համարիր զիս այդ նկատմամբ հաշիւ տալ Մեխակներին և աշխատել որ իմ վրայ արժանաւորութիւններ ցոյց տամ: Զիս ճանչողներն կը ճանչեն արդէն. չը ճանչողներին ալ, ոչ թէ գրիչս, այլ թող գործերս խօսեն ինձ համար, լաւ թէ վատ *):

Պ. Մեխակ մի պոչատր սուտ ալ կուզէ կլնեցունել Մեղուի ընթերցողներին: Նա կը գրէ թէ Միացեալ ընկերութիւնն «դիկտատորութիւն» տուած է եղել Գարեգին վ. Սրուանձտեանցին իմ վրայ և թէ ես այդ «դիկտատորական» լուծէ ազատուիլ ուզելով, իւր դէմ ելած եմ: Որպէս զի իմացուի թէ Մեխակ ինչ ատիճանի անամօթ ստախօս է, ես կառաջարկեմ Միացեալ ընկ. Ցնօրէն ժողովին որ թէ իրաւ ինք դիկտատոր ընտրած է եղեր Գարեգին վարդապետն Վասպուրականի համար, թող բարեհաճի Մշակի միջոցով հրատարակել զայդ որ ես ալ փութամ իմ յարգանքներս մատուցանել այդ դիկտատորի:

Թող ցած ոգի թշնամիներ և նախանձորդներ որչափ որ կուզեն խօսեն, գրեն և մրեն իմ վրայ, ես կը շարունակեմ իմ գործունէութիւն և նոքա չեն կարողանար հանել իւրեանց վատ նպատակի յուսահատացունելով զիս: Թող նոքա վրնջեն և փրունչեն, ես անձայն յառաջ կը տանեմ իմ աշխատութիւններս: Թող անեն ամէն տեսակ զրպարտութիւններ, վատութիւններ, մատնութիւններ, բայց թող գիտնան թէ գերեզմանի ցուրտ քարն միայն կրնայ սառեցունել փորթուգալեանի սիրտի եռանդն:

Մ. Փորթուգալեան

*) Մեղուի 213 համարին մէջ ալ «վանեցի խաչատուր Դարբինեանց» Կարսէն մի նամակ գրած է «Վանի վարժապետանոցի փակման մասին» և այդ առիթով ամէն տեսակ յարձակումներ արած է իմ վրայ, հրատարակելով թէ Վանի հրդեհին, երևակայեալ ապստամբութիւնին և այլն և այլն ես առիթ եմ եղել և թէ անարժան եմ տեսչական պաշտօնի: Աւելորդ համարեցի մատնաւոր նամակով պատասխանել նմա զի չէր արժեր: Պ. Դարբինեանց մի պուլիշնիկ էր Ցփղիսի մէջ երբ ես ալ այնտեղ էի. կը թախանձէր զիս որ Մշակի խմբագիր պ. Արծրունիէն 100 րուբլ օգնութիւն խնդրեմ իւր համար: Զուզեցի միջամտել այդ խնդիրի. թշնամացաւ ինձ: Յետոյ Կարս գնաց ուր գեր. Աղուանեան սրբազան խղճալով իւր վրայ, առաջնորդարանին մէջ պահեց զինք: Բայց Դարբինեանց Կարսէն նամակներ գրած է ինձ յորս Աղուանեանէն գանգատելով, փափաք կը յայտնէր այստեղի վարժարաններին մէջ պաշտօն վարել: Ես չը համաձայնուեցայ իւր փափաքի և վարժապետական պաշտօնի չը հրաւիրեցի այդ պարոն որ Ցփղիսի փողոցներն հաց ծախած ժամանակ երևի սովորեր է մանկավարժութիւն: Ի հարկին կարող եմ հրատարակել իւր այդ նամակներ: Մարդ որչափ ալ հանդարտ բնաւորութիւն ունենայ, չէ կարող արհամարհանք չը զգալ երբ տեսնէ թէ տղայ հասակէն մինչև այժմ վարժարանների մէջ և դրասեղանների առջև կուրծք մաշելէ և գիրքերի վրայ աչքերն տկարացունելէ յետոյ, Դարբինեանցի պէս մարդեր. կելնեն մանկավարժական քննադատութիւններ անել իւր վրայ: Ուսուցչական պաշտօնին մէջ որչափ որ ալ ստոր ատիճանի մէջ գտուիմ, պէտք չունիմ մանկավարժական դասեր առնել մի տգէտ պուլիշնիկէ: Այդպիսիներին կուղղեմ միայն Ապեղէսի խօսքն. «Կօշկարն կօշիկէն վեր թող չելնէ:»

Ա Ր Տ Ա Գ Ի Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

—

—«Presse» լրագիրը հաղորդում է, որ Բավարիայի պարլամէնտում կղերականները առաջարկեցին ոչնչացնել քաղաքական ամուսնութեան մասին պարտադիր օրէնքը, բայց պարլամէնտի մեծամասնութիւնը մերժեց այդ առաջարկութիւնը և պահպանեց քաղաքական ամուսնութեան մասին օրէնքը: Ատենաբանների մէջ խօսեց և պրոֆէսօր Դելինգէր: Այդ վճիռը երևի այժ կը տայ Լուցի մինիստրութեանը:

—Գերմանական կառավարութիւնը յայտնեց թէ անյարմար է գտնում որ առաջիկայ միջազգային հանդէսը Բերլինում լինի:

—Անգլիական «Manchester Guardian» լրագիրը ասում է որ անգլիական պարլամէնտին կը ներկայացվին զանազան զօկումէնտներ հայոց խնդրի մասին, որի լուծման վրա ամենից շատ հոգում է լորդ Դիւֆերին: Այն ժամանակից, երբ նա նշանակվել է Կ. Պոլսի դեսպան, լորդ Դիւֆերին հայոց խնդրից իր գլխաւոր պարապմունք է շինել:

—«Presse» լրագրին հաղորդում են Կ. Պոլսից, որ Կարաջա-սու շրջանի նախկին մուդիր Սաիդ էֆէնդին, Սամսունի քրէական դատարանի վճռով, դատապարտված է մշտապէս բանտարկութեանը այն կեղծ հաղորդութիւնների համար, որ նա արել է սուլթանի կեանքի դէմ չեղած դաւադրութիւնների մասին: Սաիդ-էֆէնդին խոստովանեց իր յանցանքը:

—«Presse» լրագրի Բէլգրադի թղթակիցը, դեկտեմբերի 11-ից անպայման հերքում է այն լուրը, որ իբր թէ աւստրիական կառավարութիւնը Բոսնիայի հետ հաշտվելու համար վճռողական պայման դրեց Բրատիանօի հրաժարականը:

—«Presse» լրագրին հեռագրում են Կ. Պոլսից որ առաջին մինիստր, Սայիդ-փաշան շրջաբերական է ուղարկել բոլոր նահանգապետներին որ աչքի առջև ունենալով միշտ աճող թէ անձնական և թէ կայքի անապահովութիւնը Թիւրքիայում, հրամայվում է անյապաղ ձեռնամուխ լինել պոլիցիական զօրաբաժինների կազմակերպութեանը: Այդ զօրաբաժինները կազմված կը լինեն կամաւորներից, որոնք ընդունակ են կատարել այդ ծառայութիւնը: Կամաւորները կը լինեն, ի հարկէ, ամէն նահանգների բնիկները, առանց կրօնի և ազգութեան խտրութեան:

—Գերմանական լրագիրները հաղորդում են որ այս օրերս գերմանական բայխստագի սոցիալ-դեմոկրատ կուսակցութեանը պատկանող պատգամաւորները ունեցան մի ժողով Դրէզդէնում և վճռեցին ընդդիմադրել իշխան Բիսմարկի տնտեսական քաղաքականութեանը, քանի որ բանւոր դասակարգի մէջ մոցնվելի վերանորոգութիւնները պէտք է հիմնվեն ոչ թէ բանւորների տնտեսական ազատ, կանոնաւոր զարգացման վրա, այլ պէտք է կատարվեն տերութեան ձեռքով և նրա հովանաւորութեան տակ:

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մէկ լրագիր, ի հարկէ ամերիկական, հաղորդում է անձնասպանութեան մէկ դէպք Ամերիկայի Պէնսիլվանիայում: Անձնասպանութեան պատճառը յայտնվեցաւ մէկ նամակից, որ գտան դիակի ձախ ոտի կօշիկի մէջ: Ահա այդ նամակի բովանդակութիւնը: «Ես պակվեցի մէկ այրի կընոջ հետ, որը մէկ հասակ առած աղջիկ ունէր. իմ հայրս յաճախ այցելում էր մեզ, սիրահարվեց իմ խորթ աղջկայ վրա և պսակվեց նրա հետ: Այդպիսով հարազատ հայրս իմ փեսայ դարձաւ, իսկ իմ խորթ աղջիկը դարձաւ իմ մայր, որովհետև նա իմ հօր կինը եղաւ: Մի քանի ժամանակից յետոյ իմ կինը որդի ծնեց,—նա, հասկանալի է, իմ հօր անդրանիկն և մի և նոյն ժամանակ իմ քեռին էր, որովհետև նա իմ խորթ մօր եղբայրն էր: Իմ հօր կինը, այսինքն, իմ խորթ աղջիկը նոյնպէս մէկ որդի ծնեց, որը, ինքն իրան հասկանալի է, իմ եղբայրն էր, որպէս իմ հօր որդի, և մի և նոյն ժամանակ իմ թոռն էր, որպէս իմ կընոջ աղջկայ որդի: Կինս իմ մեծ մայրն էր, որպէս իմ մօր մայր: Իսկ ես իմ կնոջ մարդն էի և մի և նոյն ժամանակ իմ կնոջ թոռը, և որովհետև մի որ և է անձի մեծ մօր մարդը այդ մի և նոյն անձի պապն է լինում, ուրեմն, ես, թշուառս, յայտնվեցայ իմ սեփական պապ:»

* * *

Վենեցիայի «Zempo» լրագրին Հռոմից հաղորդում են, թէ Պասանանտէ, որը 1878 թվի նոյեմբերին փորձեց սպանել Հումբերտ թագաւորին, խելագարվեց: Այս օրերս տաժանակիր աշխատանքներից, ուր նա գտնվում էր, Պասանանտէին կը բերեն Վենեցիայի մօտ գտնվող Սան-Սէրվօլօի հոգեկան հիւանդների յայտնի հիմնարկութեան մէջ:

* * *

Հռոմի կղերական լրագիրները զանազան մանրամասնութիւններ են հաղորդում մի քանի աստուածապաշտ և բարեգործ մարդկանց կեանքի և գործողութիւնների մասին, որոնց, այս օրերս, պապը սրբերի կարգը դասեց: Սուրբ Լաբրօ ծնվեցաւ 1748 թվին, տրապիստ դարձաւ և իր ամբողջ կեանքը անցկացրեց ողորմութիւն հաւաքելու և ժողոված փողերը աղքատներին բաժանելու մէջ: Նա միշտ հագնված էր զգուելի ցնցոտիների մէջ և փողոց չէր դուրս գալիս առանց իր ահագին պարկի, որը լցրած էր քարերով: Մի օր նրան մեռած գտան Կոլիզէումի մէջ: Նրա ամբողջ մարմինը պարազիտներով էր ծածկված: Երկրորդ նոր սուրբը, Ջիօվանի Բատիստա դէ-Ռոսսի ծնվեց 1698 թվին Լիգուրիայում: Նա կապուցին էր և իրան նուիրեց հիւանդների մասին հոգալուն: Կանանց կատաղի թշնամի լինելով, նա այնու ամենայնիւ պակներ էր գլուխ բերում և ընկած կանանց համար մէկ ապաստան հիմնեց: Նրա կատարած հրաշքներից ամենանշանաւորը համարվում է այն, որ չնորհիւ նրա ջերմ աղօթքի, մէկ կին, ծնելու ժամանակ սաստիկ չարչարվելով, մի ակնթարթում իրան լաւ զգաց և շատ հեշտութեամբ չորս առողջ մանուկներ ծնեց: Բոլորովին այլ տեսակ մարդկանց թվին է պատկանում Լորէնցօ, Բրինդիզիից: Նա կաթոլիկ կրօնի ամենաեռանդոտ քարոզողներից մէկն էր, գիտնական բանակուի ժամանակ յաղթեց «ալքիմիկոս» Տիխօ դէ-Բրագէին, Ռուդոլֆ կայսրի և պապի դիպլոմատական յանձնարարութիւնները աջողութեամբ կատարում էր, մատնակցում էր պատերազմներին և այլն: Նրա սրբութիւնը, բացի դրանից, ապացուցվում է և նրանով, որ պատերազմներում երբէք գնտակ չէր դիպչում նրան և չէր վիրաւորվում:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 դեկտեմբերի: Ժողովրդական լուսաւորութեան մինիստր հրաւիրեց տեխնիկական ընկերութեան պատգամաւորներին Խարկովի բէալական ուսումնարանների դրութիւնը և տէխնոլոգիական ինստիտուտի կանոնադրութիւնը վերաքննելու համար: Դոնդուկով-Կորսակով կուղևորվի Ս. Պետերբուրգից յունվարի կէսին: Շուտով կը կայանայ ընդհանուր ժողով զինուորական և ծովային դատարանների անդամների, որ կը քննի մի նախագիծ դատաստանական նիստերի հասարակական լինելը սահմանափակելու մասին: Նախագահը լինելու է ծովապետ Զելէօնի, զեկուցանող իշխան Իմերեթինսկի:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 դեկտեմբերի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 93 ր., երկրորդ 90 ր. 87 կ., երրորդ 90 ր. 37½ կ., չորրորդ 90 ր. 62 կ., հինգերորդ 90 ր. 75 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 223 ր. 50 կ., երկրորդ 216 ր. 75 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ր. 25 կ., երկրորդ 90 ր., երրորդ 90 ր., ոսկի 7 ր. 87 կ.: Ռուսաց 1 րուբլ Լոնդոնի վրա արժէ 25,19 պէնս, Ամստերդամի վրա 127,50 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա 214 մարկ. Փարիզի վրա 264 ֆրանկ 12 սանտիմ: Տրամադրութիւնը հանգիստ է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱԹՈՒՄԻ

ԿՕՄԻՍԻՕՆԷՐ

ԱՐՇԱԿ ԾԱՏՈՒՐԵԱՆՑ

ընդունում է ամեն տեսակ պատուէրներ, յանձնարարութիւններ և ապրանք։

17—20

ՊՕԼՈՒՍՈՒԿԻ

ՈՍԿԷ ԻՐԵՂԷՆՆԵՐԻ և ԺԱՄԱՑՈՑՑՆԵՐԻ Սառնալով մեծ քանակութեամբ, գրպանի և պատի զանազան ժամացոյցներ և ոսկէ իրեղէններ արտասահմանում և Ս. Պետերբուրգում շինված, նոյնպէս և գործիքներ ժամացոյցների և ոսկէ իրեղէնների արհեստաւորների համար, պատիւ ունեմ յայտնել պ. պ. գնողներին և արհեստաւորներին, որ ինձ մօտ բոլոր ապրանքները ծախվում են ամենաէժան գներով։ Առևտուրը կատարվում է Արծրունու գալերէյում № 185։ Օտարաքաղաքացիք պէտք է դիմեն Թիֆլիս ՊՕԼՈՒՍՈՒԿԻՆ։ 3—3 (2).

ԲԺՇԿԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴՈԿՏՕՐ ՏԷՐ-ՋԱՆԵԱՆՑ ընդունում է հիւանդներին ամեն օր առաւօտեան 10—12 ժամը։ Սօլօլակի, Սադովայա փողոց տուն Ցուտունովի։

4—5

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ներկայ տարուայ հոկտեմբերի 1-ից բանալով ԵՐԵՒԱՆՈՒՄ գրավաճառանոց, նոյնպէս և ուսումնարանական, նկարչական և կազմարարական պիտոյից իրեղէնների խանութ, հրաւիրում եմ գրաւոր աշխատանքների հեղինակներին, թարգմանիչներին, հրատարակիչներին և լրագրական խմբագիրներին (թէ հայ և թէ ռուս լեզուներով) ուղարկել ինձ վաճառելու իրենց աշխատութիւնները ԿՕՄԻՍԻԱՑՈՎ։ Իմ հասցէն. г. Эривань, Нерсесу Симеонянцу, магазинъ „Другъ Дѣтей.“ 8—10

Բ. ՇԱՀՎԵՐԴԵԱՆԻ

ԼՐԱԳՐԱԿԱՆ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿՈՒՄ

Բաժանորդագրվում են Զմիւռնիայի „ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ“ քաղաքական և գրականական հայ ամսագրին. 12 տետրակների գինը 10 ռուբլի է։

Հասցէն. Тифлисъ, Агентство В. Шавердова.

4—10

Զայի և գինու սառաքաններ

144 Արծրունու գալերէա 144
ամենաէժան պահեստ
մեբելի և հայելիների։

Ծախվում են մեծ և փոքր քանակութեամբ։

Գրասենեակ Լոռիպեմի մոտակայքում

ՌԷՍՏՕՐԱՆԸ

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԹԱՏՐՕՆԻ ՄՕՏ

Մի նոր տիրոջ ձեռքն անցնելով, սառցել է այժմ մի բոլորովին այլ և գեղեցիկ տեսք, ունի ընտիր ՃԱՇԵՐ և ԸՆԹՐԻՔՆԵՐ, նոյնպէս և լաւ ԽՄԻՋՔՆԵՐ։ Գները շատ էժան են

20—20

Въ Редакціи газеты
«МШАКЪ»
Продается
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

ԹԷՑ ՍԻՐՈՂՆԵՐԸ ԵՒ ՃԱՆԱՉՈՂՆԵՐԸ պէտք է գնեն **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ թէյ լաւ տեսակի ֆունտը 1 ր. 20 կ. և 2 ր. և համեմատեն առաջինը 1 ր. 60 կ. հետ և երկրորդը 3 ր. հետ ամեն տեղ **ԹԻՖԼԻՍՈՒՄ**, որպէս զի իմանան Անգլիական խանութի մէջ ծախվող ամեն տեսակ թէյի համեմատական **ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԻՒՆԸ**։ Բացի այդ Անգլիական խանութը կշռում է **ՄԱՔՈՒՐ** թէյ առանց **ԹՂԹԻ** և **ԱՐՃՃԻ**։

97—100

ՎԱՃԱՌՈՒՄՆ ՄԻՆՉԵՒ ՆՈՐ ՏԱՐԻՆ ամենաէժան գներով. կօնեակ, վիսկի, պօրտվէյն, խերես, շամպայն, մուրաբաներ, սօուս, պիկուլի, ըակ, սեմգա, կօնֆեկտներ, ապակու ամաններ, բրիտանական մետալից առարկաներ, սապօն, չուլկի, դուլպաններ, հագուստներ, վարտիկներ, ֆուֆայկա, ալբօմներ։ Պանիր չեստեր 80 կ. ֆունտը, արմատներ պլումպուդինգի համար 40 կ., արծաթէ մոմեր 35—42 կ. անգլիական ֆունտը, մեծ քանակութեամբ անգլիական և ֆրանսիական երկաթէ մահճակալներ 30% էժան քան թէ մի ուրիշ տեղ, այսինքն երեխաների 4 ռուբլուց և մեծերինը 12 ռուբլուց։ 50,000 ֆունտ թէյ 1 ռուբլուց և ամենալաւը 2 ր. ֆունտը։ Ծախվում են **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ**։

2—7

Վաճառվում են 15,000 ամաններ առաջին տեսակի 15 կ. հատը, 12,000 խրուստալի բաժակներ 25 կ. հատը, 10,000 բօկալ և բաժակներ 10 կ. հատը, 10,000 մատուցարաններ և կողպէքներ 15 կ. հատը, 10,000 ասեղ 8—40 կ. հարիւրը, 10,000 պենալներ 5 կ., 5,000 շիշ պօրտ-վէյն և խերես 1 ր. հատը, 2,000 արշին կլէօնկա 60 կ.—2 ր. արշինը, 2,000 գիւժին մատիտներ և գրչակոթեր 8 կ. գիւժինը, 2,000 ֆ. հնդկական բրինձ 7, 8 և 10 կ. ֆունտը, 1000 ֆունտ լէպէշկա 50 կ. ֆունտը, 600 անգլիական բէվոլվերներ 4—34 ր. հատը, 300 անգլիական հրացաններ 20—100 ր. հատը, դրապ, տրիկօ, ալբօմներ, ձմեռվայ պալտօներ, գլխարկներ, վարտիկներ, հագուստ կէս գնով։ Ծախվում է **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ։ Նոյն տեղը ծախվում է ծովային **ԽՈՏ** պուդը 2 ր. 50 կ.։

28—60

Մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնի „ՀԱՅ-ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱԽԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ“ առաջին հատորը (ա. գրքոյկ), որ բովանդակում է իւր մէջ միայն հէքիաթներ, ժողոված Երևանեան նահանգում և գրած բուն տեղական բարբառով։

Այս ա. գրքոյկի անմիջապէս լոյս տեսնելուց յետոյ, մամուլի տակ կը մնայ նորա բ. գրքոյկը։ Իսկ երբ կը վերջացնենք մեր ունեցած հէքիաթների տպագրութիւնը, այնուհետև ձեռնամուխ կը լինենք ժողովրդական աւանդութեանց միատեսակների հրատարակութեան—ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԻ, ԱՌԱԾՆԵՐԻ, ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐԻ, ԱՆԷԾՔՆԵՐԻ, ՕՐՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ և այլն (որոնցից մեծ քանակութեամբ ունենք ժողոված) լոյս ածելով նոյնպէս առանձին գրքոյկներով։

Յուսով եմ, որ մեր պատուելի օտարաքաղաքացի համազգայինք չեն զլանայ իւրեանց կարեաց չափ աջակից լինելու ինձ այս ձեռնարկութեան մէջ։

Բաւականաչափ նիւթ ուղարկողները, որպէս այս հրատարակութեան աշխատակիցներ՝ այսուհետև տպագրուելի բոլոր գրքոյկներից մի մի օրինակ ձրի կը ստանան. բացի այս՝ նոցա ազգ-անունները կը տպագրուեն գրքոյկի վերջը։ Իսկ այն պարոնները, որոնք այս աւանդութիւններից նոյնպէս մեծ քանակութեամբ ժողոված ունեն և կը ցանկանան իրանց ժողոված-ուն վաճառել՝ թո՛ղ բարեհաճեն յայտնել իրանց պայմանները։

Նիւթերը հարկաւոր է գրել (գրածը խնդրում ենք մաքուր լինի և որոշ) բուն տեղական բարբառով. դնելով ժողոված-ուի վերջը տեղական դժուարիմաց բառերի բացատրութիւնները։

Իմ հասցէն՝ Вагаршапатъ. *Тиграну Навасартянцъ.* Տ. Նաւասարդեանց.

ՇԻՐԱԿ՝ տեղագրութիւն պատկերացոյց, հաւաքեց Հ. Ղ. Ալիշան

Մանրամասն և հարազատ հետազօտութիւն Շիրակ գաւառի, գեղեցիկ քարտէզով և չքեղ պատկերներով զարդարուած։—Հ. Ալիշանի այս վերջին աշխատասիրութիւնը ամենապատուական և առաջնակարգ տեղ պէտք է բռնէ ոչ միայն նոյն հեղինակի մինչև այժմ լոյս տեսած ընտիր երկասիրութիւնների մէջ, այլ և հայկական համայն գրականութեան ծանրակշիռ զարդերից մինը պիտի համարուի։ Ամենայն հայ, որի համար թանգ է իր ազգի անցած գնացած փառքերի նշխարների հետազօտութիւնն ու մշակութիւնը, ագահութեամբ պիտի ձեռք առնէ և իր զրասեղանի անհրաժեշտ սեպհականութիւններից առաջինը պիտի դարձնէ սրան։ Գինն է 10 ր. ճանապարհի ծախքը 50 կոպ.։

ԳՐԻՉ ԵՒ ՍՈՒՐ՝ պ. Մինաս Չերազի վերջին գրուածքի առաջին հատորն է, որի մէջ յօրինողը շարունակում է այն բանակռիւը գրաբառը պաշտպանողների դէմ, որի սկիզբը ծանօթ է մեզ իւր դատարակութիւն անունով գրքից։ Բացի լեզուագիտական հակիրճ և ազդու յօդուածներից, այս գրքոյկի մէջ ընթերցողը կը գտնէ տեղեկութիւններ նաև ուրիշ մի քանի հետաքրքիր հարցերի վերաբերութեամբ։ Գինն է մէկ ռուբլի. ճանապարհի ծախքը 10 կ.։

վաճառվում են

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ։

ՆՈՐ ԴՈՒՐՍ ԵԿԱԾ ԳՐՔԵՐ

Որոնք վաճառվում են ԶԱՔԱՐԻԱ ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ „ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

1	Բագրատունի՝ Տասն պատգամք. գինն է	25 կ.
2	Աղայեանց՝ Անահիտ, հին զրոյց։	50 „
3	Թղուկ, Թարգ. Տէր-Միքայէլեանցի.	30 „
4	Աղքատ մանուկ կամ բարոյական վէպ.	20 „
5	Խաթաբալա Սունդուկեանցի.	50 „
6	Զորս մանրավէպ Տէր-Աւետիսեանի.	20 „
7	Հայերէն լօտս երեխաների համար.	50 „
8	Տէր-Ակորեանց՝ Հայաստանի աշխարհագրութիւն.	60 „
9	Կոստանեանց՝ Գրաբառ բայերի խոնհարումը.	25 „
10	Թագւորեան՝ Փորձ լեզուագիտական հետազօտութեան	50 „

Եւս ստացուել է Բոստոնի Տէր-Աբրամեանցի 1882 թուի **ՕՐԱՑՈՅՑ**, գինն է 15 կոպ. գումարով առնողներին զիջումն կը լինի։

„ԿՐԿՆԱԿԻ ԻՏԱԼԱԿԱՆ ՀԱՇԻԱՊԱՀՈՒԹԻՒՆ“ ԲՈՒԽԳԱԼՏԵՐԻԱՅ“

Ամենանոր և գործնական ձևի, բացարձակ կանոններով և բացատրութեամբ, որ ամենահեշտ կերպով կարող է սովորացնել հաշուապահութիւնը այն անձանց, որոնք ցանկանում են սովորել կամ ունենալ այդպիսի հաշիւներ, շուտով կը մնայ մամուլի տակ. գիրքը կը բաղկանայ մօտ 400 երեսից. և մաքուր տպագրութեամբ. դորա հետ միասին կը լինի և մի փոքրիկ վիպասանութիւն „Գող“ վերնագրով և „Իմ երգերը“ յաւելուածով. ցանկացողները Թիֆլիսում կարող են գրուել „Կենտրօնական“ և „Զաքարիայ Գրիգորեանցի գրավաճառանոցներում և Թադէոս Տէր-Միքայէլեանցի մօտ. Բաղու Բասիյսկիյ մագազինում, ինձ մօտ և „Մարդ ընկ“ գրադարանում. գաւառական քաղաքներում այն անձանց մօտ, որոնք բարեհաճել են այդ մասին ստորագրութեան թերթ ընդունել։

Երկուսի արժէքն է միասին 2 ր. 50 կ. տպագրութիւնից յետոյ 3 ր.։ Բաժանորդների անունները և ազգանունները կը տպագրուեն գրքի վերջում։

Հրատարակիչ Աբել Դ. Ապրեսեանց

ՎԵՐԱՐԿՈՒՆԵՐ 4 ր., ԾԸԾՈՂՆԵՐ 1 ր ծալվող աթոռներ 1 ր. 50 կ., ՓԱՅՏ-ԱԹՈՌ 4 ր., ԲԱԶԿԱԹՈՌ-ՄԱՀՃԱԿԱԼ 10 ռուբլ և աւելի, ԹԷՅի բաժակներ 25 և 30 կ., մի ման քորոցներ 50 կ., պաստելա ծխողների համար 60 կ. ֆունտը, անգլիական ՎԱՆՆԱՆԵՐ և այլն ծախվում են **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ**։

10,000 զոյգ գուլբաներ 25 կ.—ից զոյգը, 10,000 զոյգ կանանց ԳՈՒԼԲԱՆԵՐ 30 կ.—1 ր., 7,000 մատուցարաններ 5 կ.—5 ր., 1,000 ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ 5 ր.—35 ր., 400 արշին բօմազէյ. 1 ր.—1 ր. 30 կ., պարուսինա 40 կ.—1 ր., 300 հատ բէվոլվեր 4 ր.—35 ր., 700 ալբոմ ԿԻՍԱԳՆՈՎ, 10,000 ֆունտ ԹԷՅ ԹԷՑԱՄԱՆՈՎ 1 ր. 65 կ.։ Եր-կաթէ գրիչներ իւրաքանչիւր ձեռքի համար։ Ծախվում են **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ։

64—100

Դուրս եկաւ մամուլի տակից Սեդրակ Մանդինեանի հետևեալ աշխատութիւնը. „ԿԵԱՆՔԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏ ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ“. Ծխական դպրոցների Զորրորդ տարուայ դասընթացք և միանգամայն Ա. Բ. և Գ. տարիների համար հրահանգ։ Վաճառվում է բացառապէս „կենտրօնական գրախանութում“ գինն է 75 կոպէկ։

Дозволено цензурою, Тифлисъ 23 Декабря 1881 года. Типографія Главнаго Управленія Намѣстника Кавказскаго.